ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «16» սեպտեմբերի 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 24 - Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 15-ի N 1545-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Շ. Աղաբեկյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը կոմիտեի ինտերնետային կայքում.

2) կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

ա. մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվության տրամադրումը,

բ. ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ շահառուներին սահմանված կարգով իրազեկումը,

գ. կազմակերպել մրցույթի շահառուների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել կոմիտեի գլխավոր քարտուղարին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ